Հարգելի՛ ընթերցող,

Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման (ԱԵԳՄՄ) նախագիծ հանդիսացող ***Արցախի Էլեկտրոնային Գրադարանի*** կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆՎՃԱՐ:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Շնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:

Уважаемый читатель!

На сайте ***Электронной библиотеки Арцаха***, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха** (ОМУСА), размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

The Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA) presents its project - ***Artsakh E-Library*** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

Մեր տվյալները – Наши контакты - Our contacts

Site: http://artsakhlib.am/
E-mail: info@artsakhlib.am
Facebook: https://www.facebook.com/www.artsakhlib.am/
ВКонтакте: https://vk.com/artsakhelibrary
Twitter: https://twitter.com/ArtsakhELibrary

ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ

«Ազգ եւ ժառանգություն»
Համահայկական երիտասարդական գիտաժողով

Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն
Ստեփանակերտ
սեպտեմբեր 26-30, 2006թ.

ՀՀ մշակույթի եւ երիտասարդության հարցերի նախարարություն
ԼՂՀ կրթության, մշակույթի եւ սպորտի նախարարություն
ՀՀ «Երիտասարդական միջոցառումների կազմակերպման կենտրոն» ՊՈԱԿ
ԼՂՀ մշակույթի եւ երիտասարդության պալատ

«Ազգ եւ ժառանգություն»
համահայկական
երիտասարդական
գիտաժողով

Սեպտեմբեր 26-30 2006 թ.
Ստեփանակերտ

Գիտաժողովը նվիրվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հռչակման 15-ամյակին

Խմբագրական խորհուրդ

Ս. Խանյան -բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, գիտության վաստակավոր գործիչ
Վ. Բալայան- պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ
Ա. Մխիթարյան – հոգեբանական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր
Շ. Ասրյան- տնտեսագիտության ամբիոնի դասախոս
Լ. Բեգլարյան- տնտեսագիտության ամբիոնի դասախոս

Գրքում զետեղված են սեպտեմբերի 26-30-ը տեղի ունեցած Համահայկական երիտասարդական գիտաժողովի զեկուցումները

խոսքը կգնա Սահմանադրության, երեխաների իրավունքի, մարդու իրավունքների, կոնվենցիաների և այլ իրավական ակտերի խախտում:

ՀՀ Սահմանադրության «Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները» գլուխն սկսվում է ՀՀ քաղաքացիությանը նվիրված հոդվածով. «ՀՀ քաղաքացիություն ձեռք բերելու և դադարեցնելու կարգը սահմանվում է օրենքով»: ԼՂ ազգությամբ հայերը քաղաքացիությունը ձեռք են բերում պարզեցված կարգով: ԼՂ-ի քաղաքացին չի կարող լինել այլ պետության քաղաքացի, իսկ այսօրվա Սահմանադրությունը երկքաղաքացիության հարցը չի կարգավորում:

Ներկա վիճակում ԼՂ-ի քաղաքացիները ձգտում են այլ քաղաքացիություն ունենալ: Արդյո՞ք ժամանակը չէ, որ կարգավորվի ԼՂ-ի քաղաքացիների քաղաքացիության հարցը:

Մ.Ս.Գորբաչովը հայ ժողովրդի ներկայացուցիչներին վստահեցրեց, որ ԼՂ-ը կապրի մի նոր ծաղկունք, մի նոր վերածնունդ, իր իսկ բառերով՝ «ռենեսանս»:

ՀՀ անկախության հռչակումից հետո ԼՂ-ում սկսեց զարգանալ մշակույթն, արվեստն, արհեստն: Վերակառուցվեցին թերի թողնված նկեղեցիները, հայկական մեր սուրբ տաճարներում նորից լսվեց պատարագի ձայնը, այդ աղոթքի շնորհիվ էլ այսօր օրհնություն կա ԼՂՀ-ում: Եվ հիմա արցախցին անկախ է և ազատ, կրթվում է և աշխատում, երգում է և պարում... Սա է բոլորիս ցանկությունն ու նպատակը:

Հասմիկ Հինոյան
ՀՅՊ ԱԵՄ

Ղարաբաղյան հակամարտության նախապատմություն...

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հռչակումը եւ հանրապետության ԼՂՀ Հռչակագրից բխած բոլոր իրավաքաղաքական թայերը իրականացվել են միջազգային իրավունքի եւ նախկին ԽՍՀՄ օրենսդրության հիմնարար սկզբունքներին համապատասխան: Ադրբեջանի Հանրապետությունը չի օգտագործել հռչակված Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հետ ունեցած բոլոր խնդիրները երկխոսության միջոցով կարգավորելու հնարավորությունը, այլ իրականացնելով էթնիկական անհանդուրժողականության քաղաքակաութուն՝ դիմել է ուժի ապօրինի կիրառման եւ առայսօր չի հրաժարվում հակամարտությունը ռազմական ճանապարհով կարգավորելու քաղաքականությունից: Հակամարտության մեջ ներքաշված ժողովուրդները կրել են մարդկային եւ նյութական ահռելի վնասներ եւ շարունակում են

մնալ զինված առճակատման վերսկսման եւ դրա անկանխատեսելի հետեւանքների վտանգի տակ: Այս ամենի պատասխանատվությունը կրում են նախկին Ադրբեջանական ԽՍՀ-ն՝ զանգվածային բռնությունների եւ կոտորածների միջոցով փախստական դարձած շուրջ կես միլիոն հայության ճակատագրի համար: Այս հայտարարությամբ են ԼՂՀ ԱԺ-ի խումբ-խմբակցությունները հանդես եկել վերջերս կազմակերպված «Կարգավորման հեռանկարներ» խորագրով խորհրդարանական լսումներին: Ինչու եմ մեջբերում այս հայտարարությունը. որովհետեւ այն միանգամայն հիմնավորված է եւ արտահայտում է ճշմարտությունը:

Ըստ ԼՂՀ ԱԳՆ Գ. Պետրոսյանի՝ Ղարաբաղյան հակամարտության էությունը կայանում է մարդկանց իրավունքը չհարգելու մեջ: Նրա խոսքերով՝ Ադրբեջանի կողմից այդ էությունը պարբերաբար տեղափոխվում էր հակամարտություններ ստեղծող հարթություններ: Եթե որեւէ հակամարտության մեջ անտեսվում են մարդու իրավունքները, այն վեր է ածվում շահերի բախման: Ստեղծված իրավիճակի հիմնական պատճառն այն է, որ միջազգային հանրությունը, ելնելով պատերազմի մտավախությունից, չի ճանաչել ԼՂՀ անկախության մասին հանրաքվեի արդյունքները: Դա խթանել է Ադրբեջանի մտադրությունը իրավական հարցը ռազմական ճանապարհով լուծել: Ղարաբաղը պետք է մեղադրի միջազգային հանրությանը՝ նման անբարոյական վերաբերմունքի համար: Դա անհրաժեշտ է, քանի որ այսօր էլ բանակցությունների սեղանին են դրված առաջարկներ, որոնք վերաբերում են ոչ թե իրավունքի հարգմանը, այլ ավելի շատ քննարկվում է պատերազմի հետեւանքների հարցը: Առաջնորդվելով սեփական՝ ժողովրդավարական չափորոշիչներով, Արեւմուտքը պետք է քննարկի ԼՂՀ ժողովրդի իրավունքի հարցը, բայց, միաժամանակ, Արեւմուտքը չի ճանաչում հանրաքվեի արդյունքները, խոսում է հումանիտար աղետի մասին, տարածաշրջանային տնտեսական անկման եւ Ադրբեջանի կողմից հնչեցվող պատերազմի սպառնալիքների մասին: Որպես այս իրավիճակից դուրս գալու փորձ՝ գտնում եմ, որ միջնորդները պետք է առաջարկեն կողմերին՝ մեկ անգամ եւս հաստատել պատերազմը չվերսկսելու պատրաստակամությունը: Այդ ժամանակ կպարզվի, թե ով ինչ փաստարկ է օգտագործում: Հայաստանը ստիպվա՞ծ, թե՞ պարտադրված է գնում բանակցությունների: Միջազգային հանրությունը ստիպում է Հայաստանին գնալ զիջումների, քանի որ Ադրբեջանը սպառնում է պատերազմով: Ղարաբաղի դիրքորոշումը պարզ է. մենք չենք ընդունի ցանկացած որոշում, որը հակասի ժողովրդի ընդհանուր

կամքին: Ցանկացած որոշում պետք է լուծի պատերազմից տուժած բոլոր մարդկանց խնդիրները: Ադրբեջանը պետք է ճանաչվի ագրեսոր, նաեւ սեփական ժողովրդի նկատմամբ: Լեռնային Ղարաբաղը երբեք չի եղել անկախ Ադրբեջանի կազմում: Ներկայիս Ադրբեջանական Հանրապետությունը, ըստ իր անկախության հռչակագրի, իրավահաջորդն է ոչ թե ադրբեջանական ԽՍՀ-ի, այլ 1918 թ. հռչակած Ադրբեջանի Հանրապետության, որի կազմում ԼՂ-ն չի եղել, եւ որին Ազգերի Լիգան չի ճանաչել, քանզի վերոհիշյալ հանրապետությունը անհիմն տարածքային հավակնություններ էր ներկայացրել հարևան բոլոր պետություններին՝ Բաքվից մինչև Բաթում, և դա էր հիմնական պատճառը, որ տվյալ պետությունը լքեց աշխարհի քաղաքական քարտեզը, առանց միջազգայնորեն ճանաչված ու լեգիտիմ սահմանների, - նշել է Գ. Պետրոսյանը:

Լեռնային Ղարաբաղը Ադրբեջանական ԽՍՀՄ-ի կազմից դուրս է եկել ԽՍՀՄ օրենսդրությանը համապատասխան: Մասնավորապես, 1990 թվականի ապրիլի 3-ին ընդունված «ԽՍՀՄ կազմից Միութենական Հանրապետության դուրս գալուն առնչվող հարցերի լուծման կարգի մասին» ԽՍՀՄ օրենքի երրորդ հոդվածում ասվում է. «Իր կազմում ինքնավար հանրապետություններ, ինքնավար մարզեր եւ ինքնավար օկրուգներ ունեցող միութենական հանրապետությունում առանձին հանրաքվե է անցկացնում ամեն մի ինքնավար կազմավորում: Ինքնավար հանրապետությունների ու ինքնավար կազմավորումների ժողովուրդներին իրավունք է վերապահվում ինքնուրույն որոշել ԽՍՀՄ կազմում մնալու հարցը, ինչպես նաեւ իր պետահրավական կարգավիճակի հարցը»: Հետևաբար, Ադրբեջանն անկախացել է առանց Ղարաբաղի, և նախկին ԼՂԻՄ-ը մասնակցություն չի ունեցել այդ գործընթացին:

Լեռնային Ղարաբաղի հարցում միջազգային հանրությունը գործ ունի որոշակիորեն հազվագյուտ իրավիճակի հետ: Առաջինը, Ղարաբաղը իր անկախության ծգտմամբ կատարել է իր ինքնորոշման բոլոր բարոյական եւ իրավական պայմանները, մարտի դաշտում ապացուցել իր կենսունակությունը, եւ դրանով իսկ չի ընդգրկվել որեւէ խոշոր քաղաքական խմորումների մեջ: Երկրորդը, Ղարաբաղի ժողովրդի ինքնորոշման երաշխավորը հանդիսացել է Հայաստանը, որը գտնվում է առավել անբարենպաստ աշխարհաքաղաքական իրավիճակում, ունի համեմատական թույլ տնտեսական պոտենցիալ, սակավ բնական ռեսուրսներ, փոքրաքանակ բնակչություն: Հայաստանի ցուցա-

նիշները քաղաքական իրականության բոլոր կանոնների համաձայն ոչ մի կերպ չեն կարող համապատասխանել ինքնորոշվող ազգի երաշխավոր երկրի կարգավիճակին:

Ապա ինչու՞մ է կայանում հարցը: Այստեղ, իհարկե, կարելի է երկար «երեւակայել» տարբեր քաղաքագիտական, աշխարհաքաղաքական, իրավական եւ տնտեսական թեմաների շուրջ, փորձելով հասկանալ այս կամ այն ուժերի դրդապատճառը, սակայն, ինչպես թվում է, այդ պարզաբանություններից լուսավորություն չի ավելանա: Ահա թե ինչում է հարցը: Ոչ վաղ պատմական անցյալում (Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում) Հայաստանին ամենաստոր ձեւով «լքել» են՝ ԱՄՆ-ն, խոշոր եվրոպական պետությունները եւ Ռուսաստանը: Իհարկե, քաղաքական գործիչները, այնուհետեւ եւ վերը նշված պետությունների քաղաքական տեսաբանները բազմիցս փորձել են արդարացնել իրենց անսկզբունքայնությունը եւ դավաճանությունը այդ ժամանակաշրջանի քաղաքական կոնյուկտուրայով: Սակայն Հայաստանի դեպքում խոսքը այդ ժամանակ գնում էր ոչ թե խաղի, այլ խոշտանգված ժողովրդի գոյատեւման մասին, որն ենթարկվել էր մասսայական ոչնչացման: Բարոյա-քաղաքական դավաճանության փաստը ապացույցներ չի պահանջում: Այդ մասին այնքան շատ ու հիմնավորումներով է ասված, որ այստեղ տեղին չէ նշել Հայաստանի հանդեպ խոշոր պետությունների նենգության բոլոր դեպքերը: Ինչ վերաբերում է Թուրքիային եւ Ադրբեջանին, ապա նրանք օգտվել են այդ պետությունների «անազնիվ խղճից» եւ Հայաստանին գցել այսօրվա ողբերգական իրավիճակի մեջ (հայ ժողովրդի 2/3-ն ապրում է իր Հայրենիքից դուրս, փակված են առեւտրական ճանապարհները, թալանված է ազգային հարստության 80%-ը եւ այլն):

Հարկ է նշել, որ ստեղծված իրավիճակում Հայաստանը ինչպես Լեռնային Ղարաբաղի, այնպես էլ Թուրքիայի եւ Ադրբեջանի քաղաքական կանության պատճառով պարտադրված տարագրության մեջ գտնվող բոլոր հայերի լիիրավ երաշխավոր պետությունն է: Միջազգային հանրությունը պետք է գիտակցի, որ Հայաստանը այսուհետ թույլ չի տա քաղաքական կոմբինացիաներով խաղալ իր Հայրենիքի հետ: Հուսալքության ուժը հայերի մոտ այժմ ավելի շատ է զարգացած, քան հավատը դեպի պայծառ ինտեգրված ապագա: Այդ իսկ պատճառով ադրբեջանցիներն ու թուրքերը մեզ հետ պատերազմել չեն շտապում, ամերիկացիները, եվրոպացիներն ու ռուսները չեն պնդում խնդրի լուծման իրենց տարբերակի վրա: Իսկ Հայաստանին պատմական առիթ է ընձեռնել իր ժողովրդի հանդեպ դառնալ արդարության իրական երաշխավոր պետություն:

Ղարաբաղի Հանրապետության ճանաչումն ամբողջովին ներդրավվում է ժամանակակից իրողությունների շրջանակում եւ կդառնա տարածաշրջանային կայունության ու անվտանգության կարեւոր գործոն: Չնայած վերջին զարգացումներին, հատկապես Ղարաբաղյան հարցով ամերիկացի համանախագահ Մեթյու Բրայզայի վերջին ելնույթին հայտարարություններին հարցի կարգավորման ուղղությամբ, մենք կպահպանենք այն ինչն ձեռք ենք բերել արյամբ: Ընանկցությունների սեղանին դրված ներկա առաջարկները անընդունելի են հակամարտող կողմերի համար, եւ ես գտնում եմ, որ մեր իշխանավորները չեն գնա այն փոխզիջմանը, որը կհակասի մեր ձեռք բերած իրավունքի պահպանմանը: Ներկա իրավիճակում հարցը փակուղի է մտել եւ միջազգային ուժերի շտապողականությունը հարցը՝ այս տարի վերջնակետին հասցնելը, չի արդարանա, սա, իհարկե, միանգամայն տեսանելի է բոլորիս համար:

Հետեւապես մենք զարգացնենք մեր պետությունը եւ գործենք ժողովրդավար հիմունքներով, եւ պետք է ազատագրված տարածքները իրավաբանորեն ամրագրվեն մեր պետության կողմից: Պետք է առաջին հերթին հարգենք ինքներս մեզ եւ հետո ստիպենք, որ հարգեն մեզ:

Չպետք է արյունով ձեռք բերած հաղթանակին հաջորդի ստորությամբ ու քծնանքով վավերագրված «հաղթանակը», ինչպես հիշում Լեոնիդ Ազգալդյանն էր ժամանակին նկատել.

- Ոչ մի թիզ ՀՈՂ ենթակա չէ վաճառքի...

Վաչագան Սեդրակյան
«Ազատ Հայք» ԲՀԿ

Ղարաբաղյան հակամարտության նախապատմությունը. իրավիճակն ու հնարավոր զարգացումները

«Ղարաբաղյան հակամարտություն» արտահայտությունը սահմանելու, առավել ևս հասկանալու համար բավական չէ ետ գնալ մինչև 1988 թվականը, երբ Արցախում սկսվեցին զանգվածային հանրահավաքներ ու ցույցեր, տեղի ունեցան, ինչպես հիմա ենք ասում տեղական ինքնակառավարման և մարզային մարմինների արտահերթ նիստեր, որտեղ որոշումներ ընդունվեցին մարզը Ադրբեջանական ԽՍՀ կազմից դուրս բերելու և այն Հայկական ԽՍՀ-ին միացնելու մասին:

Ֆորմատ 84x60/8, ծավալը՝ 10.5 տպագրական մամուլ,
տպաքանակը՝ 300, թուղթ՝ օֆսեթ:
Տպագրությունը՝ «ՊՈԼԻԳՐԱՖ» ՓԲԸ
Ստեփանակերտ, Վ.Մամիկոնյանի փող., 21,
հեռ 4-89-96, 4-89-97, 4-89-98,

ПОЛИГРАФ